ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/18

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Մասնակից՝ «Վ. Վարդանյան» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՋԳՀ-ԱՇՁԲ-2022/1/1/2/3» գնման ընթացակարգ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վահան և Արարատի մարզի Արբաթ և Խաչփար բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.01.2022թ.-ի թիվ 26/26-1/741-2022 գրությամբ «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 10.01.2022թ.-ի թիվ Ե/01/25-22 գրության հիման վրա, 17.01.2022թ.-ին «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 17.01.2022թ.-ին:

17.01.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/18 համարի ծածկագիրը:

26.01.2022թ.-ին և 11.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 26.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.02.2022թ.-ին:

2. **<u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը 10.01.2022թ.-ի թիվ Ե/01/25-22 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) կողմից 2021 թվականի նոյեմբերի 5-ին հրապարակվել է ՋԳՀ-ԱՇՁԲ-2022/1/1/2/3 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերը, որի հայտերի բացումը տեղի է ունեցել 2021 թվականի նոյեմբերի 12-ին: Հայտերի բացման նիստի արդյունքում ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացվել «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի կողմից:

«Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված տեխնիկական բնութագիրը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան: Մասնավորապես, ներկայացված երաշխիքային ժամկետները չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին: 2021 թվականի դեկտեմբերի 2-ին «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ին ուղարկվել է անհամապատասխանությունը շտկելու

ծանուցում, որին ի պատասխան սահմանված ժամկետում «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է վերանայված Հավելված 1.1-ը, որում, սակայն, շտկում չի իրականացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը, և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը գործին սահմանված կարգով ընթացք տալու համար:

Կից ներկայացվում է «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի, ներկայացված ծանուցման, ծանուցումների պատասխանների, հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի արձանագրության պատճենները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՋԳՀ-ԱՇՁԲ-2022/1/1/2/3» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 25.01.2022թ.-ին ներկայացրած թիվ Հ/40-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան 2022 թվականի հունվարի 24-ին ներկայացված էլեկտրոնային նամակի՝ տեղեկացնում ենք, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի {այսուհետ՝ հիմնադրամ) կողմից 2021 թվականի նոյեմբերի 5-ին հրապարակվել է ՋԳՀ-ԱՇՁԲ-2022/1 /1/2/3 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերը, որի հայտերի բացումը տեղի է ունեցել 2021 թվականի նոյեմբերի 12-ին: Հայտերի բացման նիստի արդյունքում ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացվել «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի կողմից:

«Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված տեխնիկական բնութագիրը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան: Մասնավորապես, «Սարքերի և սարքավորումների նկարագիրը» Հավելված 1.1-ում սխալ է նշված եղել չափաբաժնի համարը, ինչպես նաև բացակայել են հրավերով պահանջվող սարքերի և սարքավորումների ամբողջական նկարագիրը:

2021 թվականի դեկտեմբերի 2-ին «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ին ուղարկվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու ծանուցում, որին ի պատասխան սահմանված ժամկետում «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է վերանայված Հավելված 1.1-ը:

Ուսումնասիրելով մասնակցի կողմից որպես շրկում ներկայացված փաստաթղթերը՝ հանձնաժողովն արձանագրել է, որ որպես շրկում ներկայացված Հավելված 1.1-ը կրկին չի համապատասխանում հրավերով պահանջվող սարքերի և սարքավորումների պահանջներին:

Մասնավորապես, մասնակցի կողմից տրամադրված Հավելված 1.1-ով ներկայացված սարքերի և սարքավորումների ցանկում ամբողջովին ներառված չեն եղել հրավերով հրաւյարակված առանձին ցանկով ներկայացված սարքերը և սարքավորումները, մասնավորապես՝ բացակայել են՝

- *Ֆիլտր պարուրակավոր, երաշխիքային նվազագույն ժամկետ, 10 տարի,*
- *ելեկտրոմագնիսական կցաշուրթավոր հոսքաչափ, երաշխիքային նվազագույն ժամկետ, 12 տարի:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը կայացրել է «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը անբավարար գնահատելու և մերժելու որոշում:

Կից ներկայացվում է «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի, «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ին ներկայացված ծանուցման, ծանուցումների պատասխանների, հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության, գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված դիրքորոշման պատճենները, լիազորագիրը:»:

3. <u>«Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.01.2022թ.-ին գրությամբ դիմել է «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.01.2022թ.-ի թիվ 26/26-1/741-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

«Վ. Վարդանյան» ՍՊԸ-ն 19.01.2022թ.-ին ներկայցրած թիվ 01/22 դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ 12.11.2021թ. մասնակցել ենք Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) կողմից կազմակերպված ՋԳՀ-ԱՇՁԲ-2022/1/1/2/3 ծածկագրով ընթացակարգին: 2021 թվականի դեկտեմբերի 2-ին հիմնադրամից

ստացել ենք Հավելված 1.1 - ում անհամապատասխանությունը շտկելու ծանուցում, նույն օրը կատարել ենք շտկումը, ստորագրելով էլեկտրոնային ստորագրությամբ և հետ ենք ուղարկել մրցույթը համակարգող Անի Բազեյանին:

Հիմնական շտկման պահանջը, որը երևում է նաև հիմնադրամի կողմից հայտի մերժման վերաբերյալ գրությունինց, եղել են հավելված 1.1-ով կազմած սարքեր և սարքավորումների երաշխիքային ժամկետներին: Օգտվելով մրցույթային փաթեթում տեղադրված՝ նախագծող կազմակերպության «Ջրտուք» ՍՊԸ կողմից կազմած սարքերի և սարքավորումների վերաբերյալ երաշխիքային ժամկետների ցանկից հայտնում ենք հետևյալը՝ ցանկում նշվել են ժամկետներ 10, 10-12, 10, 18 և 20 տարիներ, իսկ աղյուսակի ներքևում, նշվել են՝ Արտադրանքի վերջնական երաշխիքային ժամկետները պետք է ճշտել արտադրող կազմակերպության կողմից ներկայացվող տվյալների հիման վ/ւա:Համաձայն վերոնշյալ ցուցումի, ուսումնասիրելով և օգտվելով արտադրող կազմակերպությունների կողմից նախատեսված տեխնիկական փաստաթղթերը (որոնց պատճեները կցվում են սույն գրությանը), երաշխիքային ժամկետները բոլորի համար ցածր են, օրինակ.

ա) խողնակների համար հենց իրենց կողմից պահանջված ԳՈՍՏ 10738-76-ով երաշխիքային ժամկետ է սահմանվում է 12 ամիս (իսկ ծառայության ժամկետ 16 տարի)

բ) ջրաչափի և իր ֆիլտրի համար համաձայն ԳՈՍՏ 50601-93-ի սահմանվում է 18 ամիս երաշխիքային ժամկետ (իսկ ծառայության ժամկետ 12 տարի)

գ) ստորգետնյա հիդրանտի համար ԳՈՍՏ-ը սահմանում է 36 ամիս (իսկ ծառայության ժամկետ 18 տարի)

դ) կցաշուրթավոր ճկուն միացումների ծառայության ժամկետները ընդհանրապես 20-30 տարի է համաձայն ինտեռնետային տվյալների, ոնց պահանջվել է հայտով:

Այստեղ բոլոր սարքեր սարքավորումների տեխնիկական բնութագրերում առկա է ուրիշ հանգամանք, տվյալ ապրանքի ծառայության ժամկետը (продолжительность или срок службы), որը բավականին բարձր է և այդպես էլ պետք է լինի: Ըստ երևույթին նախագծող կազմակերպությունը երաշխիքային ժամկետի փոխարեն ներկայացրել է պահանջ ծառայության ժամկետի (տարիների քանակի) վերաբերյալ, որը ՀՀ ոչ մի օրենքով նախատեսված չէ և իրավունք չունեին մեզնից ավելորդ պահանջ ներկայացնելու:

Մենք բոլոր սարքերի ու սարքավորումների համար ներկայացրել ենք 3 տարի ժամկետ, քանի որ, ըստ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի պատվիրատուն իրավունք ունի աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջ ներկայացնել 365 օրում և

համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 722 հոդվածի բոլոր երաշխիքային ժամկետները 3 տարուց ավել չեն կարող լինել:

Ի մի բերելով վերը նշված ու մեր կողմից ներկայացված փվյալները, մեր կազմակերպությունը, այս սխալ, ՀՀ օրենքներին հակասող և ոչ հիմնավոր պահանջների հիման վրա նախաձեռնած ընթացակարգի հետ համաձայն չէ և չի ընդունում այն:

Եվ ընդհանրապես ոչ մի կազմակերպություն չի կարող սարքերին և սարքավորումներին անտրամաբանական 10-20 տարվա երաշխիք տալ, որի համար չկա այդպիսի օրենք ու այդպիսի պահանջ չի կարող լինել:»:

Մասնակիցը 24.01.2022թ.-ին ներկայցրած թիվ 04/22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր կողմից 17.01.2022թ. Նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2022/18 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ կատարել ենք ուսումնասիրություններ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված 29.12.2021թ. կազմած թիվ 2 արձանագրության որոշ մանրամասներ և հանգել հետևյալին.

1. Անհասկանալի է Նիստը տեղի ունեցավ 2021 թվականի նոյեմբերի 2-ից դեկտեմբերի 29-ը արտահայտությունը:

2. Արձանագրությունից երևում է, որ հայտերը բացվել են 2021 թ. Նոյեմբերի 12-ին, սակայն, Կարգի 41-րդ հոդվածի համաձայն պետք է նիստը նույն օրը կասեցվեր 1 օրով և ուղարկվեր անհամապատասխանությունները շտկելու մինչև կասեցման ժամկետի ավարտը:

Մեզ ուղարկվել է շտկելու դեկտեմբերի 2-ին, իսկ երբ է կասեցվել նիստը, պարզ չէ:

3. Արձանագրությունից երևում է նաև, որ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ է անցկացվել 2021թ. Դեկտեմբերի 20-ին:

Քանի որ Կարգի 40-րդ հոդվածի 5-րդ կետի գ) ենթակետի համաձայն բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը, ենթադրվում է որ ծանուցումները բանակցությունների վերաբերյալ ուղարկվել են գոնե 2021թ. դեկտեմբերի 17-ին, այսինքն ,,Վ.Վարդանյան,, ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների մասնակիցների ցուցակում ներառելու „Գնումների մասին,, ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 17.12.2021թ., սակայն պատվիրատուն այդ փվյալները՝ համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել է

լիազորված մարմին 07.07.2022թ., խախտելով Կարգի 45 կետով 5-օրյա ժամկետը և զրկելով մեզ հետագա գործընթացին մասնակցելու իրավունքից:

Այսպիսով մենք գտնում ենք, որ պատվիրատուի կողմից խախտվել են բոլոր ժամկետային նորմերը, մեզ զրկելով հետագա գործընթացին մասնակցելուց և խնդրում ենք Ձեզ հաշվի առնել վերոգրյալ հանգամանքները:»:

Մասնակիցը 25.01.2022թ.-ին ներկայցրած թիվ 05/22 գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ուսումնասիրելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վահան և Արարատի մարզի Արբաթ և Խաչփար բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» աշխատանքների վերաբերյալ դիրքորոշմանը հանգել ենք հետևյալին.

1.ներկայացվում է, որ Հավելված 1.1-վ չի ներկայացվել

ա) Ֆիլտր պարուրակավոր

բ) էլեկտրոմագնիսական կցաշուրթավոր հոսքաչափ

Նախահաշվով չի նախատեսված էլեկտրոմագնիսական կցաշուրթավոր հոսքաչափ, չգիտենք ինչ նպատակով է այդ ակնհայտ անհամապատասխանությունը ներկայացվում իրենց կողմից:

Ֆիլտրը դա սովորական կցամաս է և ոչ թե սարք կամ սարքավորում, ներկայացված է Հավելված 1.1-ի 4-րդ տողում, կամ սովորաբար վաճառվում է որոշ մոդելի ջրաչափի հետ միասին, նույն երաշխիքային ժամկետներով, ինչպես նաև կարող ենք օգտվել „Կամ համարժեք,,-ից:

Ինչ վերաբերվում է երաշխիքային ժամկետներ հասկացողությանը, մենք այն հասկանում ենք բառացի երաշխիքային ժամկետներ:

Կամ ինչ է նշանակում պատվիրատուի կողմից նշված.

2) Եթե բողոք ներկայացրած անձը բողոքարկում է՝

2) Գնման առարկայի բնութագրերը, նախարակավորման հայտարարության

կամ

Հրավերի պահանջների, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը», կասեմ, որ մենք բողոք չենք ներկայացրել, բողոքը իրենց կողմից է ներկայացվել, մենք ընդամենը հայտնել ենք մեր դիրքորոշումները:

Հայտնում ենք նաև, որ ես պետք է մասնակցեի ընթացակարգի նիստին, բայց մահացել է եղբայրս, այդ պատճառով նիստին չեմ կարող ներկա լինել, հայցում եմ Ձեր ներողամտությունը:»:

4. <u>ՍՑ-LO-2022/18 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Վահան և Արարատի մարզի Արբաթ և Խաչփար բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 05.11.2021թ.-ին հայտարարվել է «ՋԳՀ-ԱՇՁԲ-2022/1/1/2/3» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՋԳՀ-ԱՇՁԲ-2022/1/1/2/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 12.11.2021թ.-ից 29.12.2021թ.-ը տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում «Սարքերի և սարքավորումների նկարագիրը» Հավելված 1.1-ում և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևում արձանագրվել են անհամապատասխանություններ:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 03.12.2021թ.-ին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի vvardanyan.am@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է «Սարքերի և սարքավորումների նկարագիրը» Հավելված 1.1-ը, սակայն չի իրականացրել պահանջվող շտկումը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 2-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

viii. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 10.01.2022թ.-ին թիվ Ե/01/25-22 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.01.2022թ.-ի թիվ 26/26-1/741-2022 գրությամբ «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում

նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Վահան և Արարատի մարզի Արբաթ և Խաչփար բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 05.11.2021թ.-ին հայտարարված «ՋԳՀ-ԱՇՁԲ-2022/1/1/2/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.11.2021թ.-ից 29.12.2021թ.-ը տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում «Սարքերի և սարքավորումների նկարագիրը» Հավելված 1.1-ում և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևում արձանագրվել են անհամապատասխանություններ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 03.12.2021թ.-ին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի vvardanyan.am@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին: Այնուհետև Հանձնաժողովն արձանագրել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է «Սարքերի և սարքավորումների նկարագիրը» Հավելված 1.1-ը, սակայն չի իրականացրել պահանջվող շտկումը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 2-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 10.01.2022թ.-ի թիվ Ե/01/25-22 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 29.12.2021թ.-ին՝ Մասնակցի հայտը անբավարար գնահատելու և մերժելու հիմքով, սակայն Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 10.01.2022թ.-ի թիվ Ե/01/25-22

գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի

փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա

հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.01.2022թ.-ի թիվ 26/26-1/741-2022 գրությամբ «Վ. Վարդանյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/18 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**